**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/43394-2022

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-446-29.11.2022-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1556-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-446-29.11.2022-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է.

1. Նախագծի 1-ին հոդվածի՝

1) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ՝ «Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածի՝» խմբագրությամբ: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ փոփոխությունները կատարվում են 2-րդ հոդվածի տարբեր կետերում: Միաժամանակ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը: Իսկ 3-րդ և 5-րդ պարբերություններից հանել «նույն հոդվածի» բառերը.

2) 2-րդ պարբերությունում «Պրոֆեսիոնալ սպորտ» հասկացությունը նպատակահարմար չէ փոխարինել «Պրոֆեսիոնալ մարզաձև» հասկացությամբ, քանի որ որպես այդպիսին պրոֆեսիոնալ մարզաձև հասկացություն գոյություն չունի: Գոյություն ունի պրոֆեսիոնալ սպորտ հասկացություն, որով կարող են զբաղվել տարբեր մարզաձևերի մարզիկները: Ըստ այդմ, առաջարկում ենք օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունը հանել.

3) 4-րդ պարբերությունում «Դոպինգի օգտագործումը» հասկացությունը նպատակահարմար չէ փոխարինել «Դոպինգ» հասկացությամբ, քանի որ խախտման դեպք է դոպինգի օգտագործումը, այլ ոչ թե դոպինգը: Առաջարկում ենք 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժե) Դոպինգի օգտագործում՝ համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով սահմանված հակադոպինգային կանոնների մեկ կամ մի քանի խախտման դեպք».

4) 6-րդ պարբերությամբ կատարվող փոփոխությունն ընդունելի չէ: «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) ներկայիս կարգավորումն ավելի նպատակահարմար է, քանի որ Համաշխարհային հակադոպինգային գործակալության օրենսգրքից են բխում «Հակադոպինգային գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության դրույթները: Միաժամանակ, իրավական որոշակիության սկզբունքի պահանջները հաշվի առնելով, պարզաբանված չեն, թե նախագծում ինչ են ենթադրում թեստերի բաշխման պլանավորումը, գրանցված թեստավորման լողավազանի պահպանումը, այլ գործողությունների կատարումը և այլն.

5) չհամարակալված պարբերություններում և մյուս հոդվածներում «հետևյալ բովանդակությամբ» բառերն առաջարկում ենք փոխարինել «հետևյալ խմբագրությամբ» բառերով:

2. Նախագիծն անհրաժեշտ է խմբագրել՝ համաձայն առաջարկությունների 1-ին կետի՝ չկրկնելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ամբողջական անվանումը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը:

3. Նախագծի 1-ին և 5-րդ հոդվածներում առկա չհամարակալված պարբերություններն անհրաժեշտ է համարակալել՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջների:

4. Նախագծի 2-րդ հոդվածի բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ հակադոպինգային կանոններ հաստատելու լիազորությունը նախատեսվում է վերապահել «Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (գործող կարգավորմամբ դրանք հաստատելու լիազորությունը պատկանում է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնին): Այս առումով, հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ իրավակարգավորումներին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող

նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտն է:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, շրջակա միջավայրի պահպանության և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

Վերոգրյալ իրավական կարգավորումների բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ «Հակադոպինգային կանոններ» հաստատելու լիազորությունը պետական ոչ առևտրային կազմակերպությանը վերապահելու մասին կարգավորումը խնդրահարույց է, քանի որ այն չի բխում վերոգրյալ իրավական ակտերի պահանջներից և հակասության մեջ է գտնվում սահմանադրական դրույթների հետ, մասնավորապես՝ Սահմանադրությամբ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն վերապահվել է միայն Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին, որպիսին պետական ոչ առևտրային կազմակերպությունները չեն հանդիսանում:

Բացի այդ, հարկ է նշել, որ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով ևս պետական ոչ առևտրային կազմակերպություններին ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն վերապահված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծով առաջարկվող կարգավորումն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով Սահմանդրությամբ և օրենքներով սահմանված վերոնշյալ դրույթներին:

Հաշվի առնելով, որ Հակադոպինգային կանոնները հաստատում է Միջազգային հակադոպինգային կոմիտեն, առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածով ուժը կորցրած ճանաչել օրենքի 9-րդ հոդվածի ժ.7) կետը, իսկ 2-րդ հոդվածի 2-րդ մասը հանել նախագծից:

5. Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է օրենքի 12-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ: Օրենքի ներկայիս կարգավորումն ավելի նպատակահարմար է, հաշվի

առնելով, որ ՀԱՕԿ-ը չի իրականացնում մարզիկների թեստավորում և որակավորում: Համաձայն Համաշխարհային հակադոպինգային գործակալության օրենսգրքի 20.5-րդ հոդվածի՝ ՀԱՕԿ-ը չի կարող միջամտել Հակադոպինգային գործունեության իրականացմանը:

6. Նախագծի 4-րդ հոդվածն առաջարկում ենք խմբագրել և ապահովել բովանդակային համապատասխանությունը: Անհրաժեշտ է համապատասխանեցնել օրենքի 13-րդ հոդվածի մյուս կետերի շարադասությանը:

7. Նախագծի 5-րդ հոդվածի՝

1) «միշտ տեղեկացնելով» բառերը փոխարինել «մշտապես տեղեկացնելով» բառերով, «օգտվելու բժշկական սպասարկումից», «ստանալ բուժում» բառերը համապատասխանաբար փոխարինել «ստանալ բժշկական օգնություն և սպասարկում» բառերով, «բուժհաստատություններում» բառը փոխարինել «բժշկական կազմակերպություններում», «բժշկական դիսպանսեր» բառերը՝ «դիսպանսերային (շարունակական) հսկողության ծառայություն իրականացնող հաստատություններ» բառերով: Առաջարկը պայմանավորված է առողջապահության ոլորտը կարգավորող իրավական ակտերում կիրառվող հասկացություններին համապատասխանությունն ապահովելու անհրաժեշտությամբ.

2) «1-ին մասի» բառերը փոխարինել «2-րդ մասի» բառերով: Հավաքական թիմի կազմում ընդգրկված մարզիկների իրավունքները սահմանված են 5-րդ հոդվածի 2-րդ մասով:

8. Նախագծի 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսվում են պարտականու-թյուններ, մասնավորապես՝ հավաքական թիմի կազմում ընդգրկված մարզիկները պարտավոր են տեղեկացնել բժշկական անձնակազմին արգելված նյութեր և արգելված մեթոդներ չօգտագործելու իրենց պարտավորության մասին, ինչպես նաև պատասխանատվություն ստանձնել՝ համոզվելու համար, որ ստացված ցանկացած բուժօգնություն չի խախտում հակադոպինգային քաղաքականությունը և համապատասխան կանոնները:

Հավաքական թիմի մարզիչները, մասնագետները և բժիշկները պետք է տեղյակ լինեն և համապատասխանեն սահմանված հակադոպինգային բոլոր քաղաքականություններին և համապատասխան կանոններին:

Այս առումով, հարկ ենք համարում նշել, որ վերոգրյալ կարգավորումներն անհրաժեշտ է որոշակիացնել և խմբագրել՝ հստակեցնելով, թե արդյոք սահմանված պահանջները չպահպանելը (պարտավորությունները չկատարելը) առաջացնելու է որոշակի իրավական

հետևանքներ՝ հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքը: Միաժամանակ, նշված ձևակերպումներից անհրաժեշտ է հանել «ներառյալ Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպության հակադոպինգային կանոններով» բառերը, հաշվի առնելով, որ Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպությունը չի կարող սահմանել այլ բան, ինչ սահմանված է Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով:

9. Նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվում է, որ օրենքն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Այս առումով հարկ է նշել, որ նախագծով նախատեսվում են կարգավորումներ, որոնց պահանջներին հասցեատերերը պետք է համապատասխանեցնեն իրենց վարքագիծը: Հետևաբար, անհրաժեշտություն կառաջանա նախատեսել ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, որոնց համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջն իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, օրենքի նախագծում անհրաժեշտ է սահմանել ուժի մեջ մտնելու ողջամիտ ժամկետ:

Նախագծով նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) մի շարք հոդվածներում, մինչդեռ հիմնավորման մեջ բացակայում է կարգավորման համար ընտրված այս կամ այն եղանակի նպատակահարմարության մանրամասն հիմնավորումը:

Հիմնավորման ճիշտ կառուցվածքը և բովանդակությունն առանցքային նշանակություն ունեն, քանի որ հիմնավորման միջոցով նախագիծը մշակող պետական մարմինը պարզաբանում է իրավական ակտի ընդունման նպատակը, կարգավորման անհրաժեշտությունը, կարգավորման համար ընտրված եղանակի նպատակահարմարությունը, պարզաբանում է նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը, իրավական ակտի ընդունմամբ ակնկալվող արդյունքները:

Այս առումով հարկ է նշել, նաև որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ–1176 որոշմամբ անդրադառնալով օրենքների հիմնավորվածությանը, արձանագրել է. «(…) օրենսդրությունն ստատիկ երևույթ չէ, այն կարող է և պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ մշտապես կատարելագործվելով տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխմանն ու մի շարք այլ գործոններին համահունչ: (…) Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը կարևորում է օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N1556-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-446-29.11.2022-ԳԿ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196-Ն օրենքի 2-րդ հոդվածի է) կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«պրոֆեսիոնալ մարզաձեւ՝ սպորտի բնագավառում շահույթ հետապնդող գործունեություն, որին մասնակցում են պրոֆեսիոնալ մարզական կազմակերպությունները (լիգաներ, ակումբներ, թիմեր), սպորտը որպես մասնագիտություն ընտրած մարզիկները.»

Նույն հոդվածի «ժե)» կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«Դոպինգ՝ Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով սահմանված հակադոպինգային կանոնների մեկ կամ մի քանի խախտումների դեպքեր.»

Նույն հոդվածի «ժզ)» կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«Հակադոպինգային գործունեություն՝ հակադոպինգային կրթություն եւ տեղեկատվություն, թեստերի բաշխման պլանավորում, գրանցված թեստավորման լողավազանի պահպանում, մարզիկների կենսաբանական անձնագրերի կառավարում, փորձարկումների անցկացում, նմուշների վերլուծության կազմակերպում, հետախուզության հավաքագրում եւ հետազոտությունների անցկացում, Թերապեվտիկ օգտագործման բացառության դիմումների մշակում, արդյունքներ կառավարում, մշտադիտարկում եւ վրա հասնող հետեւանքների համապատասխանեցում, հակադոպինգին վերաբերող բոլոր այլ գործողությունների կատարում, որոնք պետք է իրականացվեն հակադոպինգային կազմակերպության կողմից կամ նրա անունից, ինչպես սահմանված է Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքում եւ/կամ միջազգային չափորոշիչներում.»

Նույն հոդվածը լրացնել նոր Ժթ) կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպություն՝ կառավարության կողմից ստեղծված կազմակերպություն Հայաստանի Հանրապետությունում հակադոպինգային գործունեություն իրականացնելու համար»

Հոդված 2. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196-Ն օրենքի 9-րդ հոդվածի ժ.7) կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«ապահովում է Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպության գործառնական անկախությունը եւ նպաստում դրա համապատասխանությանը Սպորտում դոպինգի դեմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային կոնվենցիային, Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքին եւ միջազգային չափորոշիչներին:

Հոդված 3. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196-Ն օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերությունից հետո ավելացնել նոր պարբերություն հետեւյալ բովանդակությամբ.

«ՀԱՕԿ-ը պատասխանատու է Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպությանն աջակցելու համար՝ նախաձեռնելով եւ իրականացնելով Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով եւ միջազգային չափորոշիչներով նախատեսված բոլոր պարտավորությունները:»

Հոդված 4. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196-Ն օրենքի 13-րդ հոդվածի գ) կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«աջակցել Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպությանը իրականացնելու իր՝ Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով եւ միջազգային չափորոշիչներով ստանձնած բոլոր պարտավորությունները»:

Հոդված 5. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196-Ն օրենքի 18.6-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«օգտվելու բժշկական սպասարկումից, ինչպես նաեւ ստանալ համապատասխան բուժում հիվանդությունների, վնասվածքների դեպքում բուժհաստատություններում, բժշկական դիսպանսերներում, միշտ տեղեկացնելով բժշկական անձնակազմին արգելված նյութեր եւ արգելված մեթոդներ չօգտագործելու իրենց պարտավորության մասին եւ պատասխանատվություն ստանձնելու՝ համոզվելու համար, որ ստացված ցանկացած բուժօգնություն չի խախտում հակադոպինգային քաղաքականությունը եւ կանոնները, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն.»

Նույն հոդվածի 2-րդ մասի ե) կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«տեղեկացված լինել եւ հետեւել հակադոպինգային բոլոր քաղաքականություններին եւ կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն, ներառյալ Հայաստանի ազգային հակադոպինգային կազմակերպության հակադոպինգային կանոնները.»

Հոդված 6. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196-Ն օրենքի 18.7-րդ հոդվածի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հավաքական թիմի մարզիչներն ու մասնագետները պետք է տեղյակ լինեն եւ համապատասխանեն հակադոպինգային բոլոր քաղաքականություններին եւ կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով, ներառյալ Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպության հակադոպինգային կանոններով:»

Հոդված 7. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196-Ն օրենքի 18.9-րդ հոդվածի 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հավաքականի թիմի բժիշկները պետք է տեղյակ լինեն եւ համապատասխանեն հակադոպինգային բոլոր քաղաքականություններին եւ կանոններին, որոնք ընդունվել են Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքի համաձայն, ներառյալ Հայաստանում Ազգային հակադոպինգային կազմակերպության ազգային հակադոպինգային կանոնները:»

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

Ընթացիկ իրավիճակը եւ առկա խնդիրները, առաջարկվող կարագավորումները

Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին ՀՀ օրենքում փոփոխությունների եւ լրացումների կատարումը պայմանավորված է միջազգային իրավունքի սկզբունքների եւ նորմերի կիրառման անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ ոլորտին ներկայացվող արդի պահանջներին համապատասխանելու հրամայականով: Փոփոխությունների նախաձեռնությունը պայմանավորված է նաեւ Համաշխարհային Հակադոպինգային Գործակալության (այսուհետ՝ ՀՀԳ) կողմից Հայաստանի «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ին հասցեագրված գրությամբ, որում ներկայացված է խիստ պահանջ՝ իրականացնելու փոփոխություններ եւ լրացումներ ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին 2001թ. հունիսի 26-ի N ՀՕ-196-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) այն հոդվածներում, որոնք կապված են դոպինգի սահմանման եւ հակադոպինգային գործունեության հետ:

Համապատասխանեցման գործընթացի իրականացման համար անհրաժեշտություն է առաջանում Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին ՀՀ օրենքում կատարել դոպինգ նորմերին եւ կանոններին վերաբերող որոշակի փոփոխություններ եւ լրացումներ, որի կատարման պարտադիրությունը պայմանավորված է նաեւ ՀՀ կողմից վավերացված Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքով սահմանված պարտադիր եւ անհրաժեշտ իրավանորմերին համապատասխանելու ստանձնած պարտավորությամբ:

Ակնկալվող արդյունքը

Հիմք ընդունելով այն փաստը, որ 2001թ.-ից հետո հակադոպինգային գործունեության ոլորտում ՀՀԳ-ի կողմից իրականացվել են զգալի փոփոխություններ, առաջարկվող փոփոխությունների եւ լրացումների կատարմամբ ակնկալվում է ոլորտի առավել կայուն զարգացում ու կարգավորում՝ Օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծի մշակման եւ օրենսդրությամբ պարտադիր բոլոր ընթացակարգերի կազմակերպման եւ պահպանման ուղղությամբ: Սահմանված փոփոխությունները միտված են համապատասխանեցնելու միջազգային եւ ներպետական իրավունքի նորմերը եւ որի չկատարումը կարող է հանգեցնել նշված ոլորտում իրականացվող գործունեության՝ միջազգային նորմերին եւ սկզբունքներին անհամապատասխան գործելու շարունակական փորձ:

Բացի դա միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելը նաեւ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված պարտադիր նորմերի կատարում է, մասնավորապես,

Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրառվում են միայն վավերացվելուց հետո:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Նախագիծը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշումից

Նախագծի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: